ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 փետրվարի 2026 թվականի թիվ 19-Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 11-րդ մասի և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ և 11-րդ հոդվածների դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը»՝ համաձայն հավելվածի:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

11 փետրվարի 2026թ.
ք.Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2026 թվականի փետրվարի 11-ի թիվ 19-Ա որոշման

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությամբ սահմանվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների (այսուհետ՝ **Ընտրություններ**) նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների (այսուհետ՝ Հեռարձակողներ) կողմից Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման և Հեռարձակողների նախընտրական քարոզչության լուսաբանման արդյունքների հաշվարկման գործընթացը:

2. Սույն մեթոդաբանության նպատակն է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանների և քաղաքացիների (ընտրողների) կողմից անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովումը:

2. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

3. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հեռարձակված տեսալսողական ծրագրերի մշտադիտարկումն իրականացնում է՝ հիմք ընդունելով հետևյալը.

1) տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքները.

2) տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրված տվյալները.

3) Հեռարձակողների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը.

4) Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը.

5) պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների կողմից Հանձնաժողով պաշտոնապես ներկայացված տեղեկատվությունը.

6) Հեռարձակողների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

4. Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամի մշտադիտարկումն իրականացվում է համաձայն հրապարակված վճարովի եթերաժամանակի արժեքի սահմանման և եթերաժամանակի տրամադրման կարգի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

3. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

5. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրական օրենսդրության պահանջների ապահովման նպատակով Հեռարձակողներն իրենց տեսալսողական հաղորդումներում պետք է ապահովեն

1) փաստերի և կարծիքների միջև հստակ տարբերությունը.

2) հավաստի, ստուգված, անկողմնակալ փաստի կամ իրադարձության մասին տեղեկացումը.

3) կարծիքների անաչառությունը, կշռադատվածությունը և հակառակ տեսակետների ներկայացումը.

4) ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում սեղմ ժամկետում միևնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը.

5) հաղորդավարների կողմից կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական ծրագրերի վերաբերյալ իրենց տեսակետը ներկայացնող անձանց քաղաքական պատկանելությունը ներկայացնելը։

6. Լրատվական հաղորդումներում Հեռարձակողները պետք է ապահովեն

1) հավաստի և ստուգված տեղեկատվություն.

2) իրազեկումը ներկայացված փաստերի անանուն կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ.

3) ներկայացվող պատկերների, փաստերի և տվյալների բովանդակության վերաբերելիությունը հեռարձակվող վերնագրերի ու տեքստի համատեքստում:

7. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հեռարձակողների կողմից ընտրական օրենսդրության պահանջների համապատասխանության մշտադիտարկման արդյունքում գնահատվում է

1) հրապարակված վճարովի եթերաժամի արժեքի և հայտարարման ժամկետի պահանջներին համապատասխանությունը.

3) տրամադրվող եթերաժամանակի և դրա հեռարձակման ժամի համապատասխանությունը.

4) Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող տեսալսողական հաղորդումներում էկրանի վրա պարտադիր անընդմեջ «Նախընտրական

քարոզչություն» լուսագրի առկայությունը, իսկ լսողական հաղորդումների դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ դրա մասին հիշեցնելու պահանջի ապահովումը.

5) Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական հաղորդումներում սույն գնահատման մեթոդաբանության 5-րդ և 6-րդ կետերում սահմանված դրույթների պահպանումը.

6) Ընտրությունները լուսաբանողի, տեսալսողական հաղորդումներ վարողի, եթերում հանդես եկող Հեռարձակողի աշխատակցի Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված որպես թեկնածու գրանցված լինելու, ինչպես նաև աշխատանքային կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր ունեցող անձանց հանգամանքը, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածով սահմանված դեպքերի.

7) լրատվական թողարկումներում և քաղաքական հաղորդումներում Ընտրությունների նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման գնահատականներից զերծ և անկողմնակալ լինելու հանգամանքը, հավասարության և ոչ խտրական սկզբունքի պահպանումը.

8) Ընտրություններին նախընտրական քարոզչություն իրականացնող հանրային ծառայության մեջ գտնվող անձի գործունեության լուսաբանման համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի պահանջներին, պաշտոնական և այլ գործունեության լուսաբանման տարանջատվածությունը.

9) Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական հաղորդումներում և հաղորդաշարերում մասնակցության հավասար հնարավորություն ընձեռելու հանգամանքը.

10) Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ տեսալսողական հաղորդումներում և հաղորդաշարերում լրագրողի, տեսալսողական հաղորդումը վարողի, եթերում հանդես եկող Հեռարձակողի աշխատակցի անկողմնակալ լինելու հանգամանքը.

11) գեղարվեստական, փաստավավերագրական, անիմացիոն ֆիլմերում, տեսահոլովակներում, տեսաձայնագրություններում, առևտրային գովազդում, Հեռարձակողի այնպիսի տեսալսողական հաղորդումներում, որոնք նվիրված չեն Ընտրությունների նախընտրական քարոզչության լուսաբանմանը, Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կամ նրանց ներկայացուցիչ չհանդիսացող անձի կողմից, այդ թվում՝ նաև ինտերակտիվ եղանակով, նախընտրական քարոզչություն իրականացնելու հանգամանքի առկայությունը (ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գործունեության, քաղաքական և (կամ) նախընտրական ծրագրերի հիշատակելը, ներկայացնելը, գնահատական հնչեցնելը, համեմատություն իրականացնելը, կողմ կամ դեմ քվեարկելու կոչով հանդես գալը, ինչպես նաև կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների խորհրդանիշերի և այլ խորհրդանիշերի

նույնական կամ շփոթելու աստիճան նման լինելը, նույնական այլ գործող կուսակցությունների ու հասարակական այլ միավորումների, միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության տարածքում արգելված կազմակերպությունների կամ կուսակցությունների խորհրդանիշերին և այլ խորհրդանիշերին), ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների խորհրդանիշերի և կարգախոսերի առկայությունը.

12) Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակման համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին.

13) Հեռարձակողների կողմից էթիկական նորմերի պահպանումը.

14) Ընտրությունների նախընտրական քարոզչությանը վերաբերող տեսալսողական հաղորդումները առևտրային գովազդով ընդմիջելու արգելքի պահպանումը.

8. Հեռարձակողների գործունեության և ընտրական օրենսդրության պահանջներին համապատասխանության արդյունքում գնահատվում է նաև

1) մինչև Ընտրությունների նախընտրական քարոզչության ավարտը արժեքի անփոփոխությունը.

2) Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ներկայացրած տեսալսողական նյութի հեռարձակելը մերժելու հիմքերի իրավաչափությունը, պատշաճ հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

3) Ընտրությունների քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչական նյութի՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչության իրականացման առկայության հանգամանքը:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

9. Ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում և դրա ավարտից հետո հաշվարկվում են

1) նախընտրական քարոզչության ընթացքում Ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից *յուրաքանչյուրին առանձին* Հեռարձակողների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերային ժամանակը, այդ Հեռարձակողի տեսալսողական հաղորդումներին նրանց մասնակցության, ինչպես նաև նրանց նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման տևողությունը.

2) նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին *առանձին* Հեռարձակողի կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված *ընդհանուր* եթերային ժամանակը, Հեռարձակողի տեսալսողական հաղորդումներին նրանց մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման *ընդհանուր* տևողությունը.

3) նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից *յուրաքանչյուրին բոլոր* Հեռարձակողների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերային ժամանակը, տեսալսողական հաղորդումներին մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման ընդհանուր տևողությունը.

4) նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին *բոլոր* Հեռարձակողների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված *ընդհանուր* եթերային ժամանակը, տեսալսողական հաղորդումներին մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման ընդհանուր տևողությունը: